


Մինօգը կարգադրեց նրան արգելել Սեանի վանքում իսկ նրա դատը յանձնեց Երեանի նահանգական դատարանին:

22 սեպտ.—Պր. Կառավարչապետի 12 սեպտ. թ. 9881 թոյլտուութեան համաձայն հրամայուեց Երեանայ Կոնսիստորիային մկրտութեամբ ընդունել Բուրդ Մատո Ղաֆար օղլուն Հայաստ. ս. Եկեղեցւոյ ծոցը:

— Մինօգը Երեանի Դատարանի պրօկուրորի զեկուցումից իմանալով թէ Դիտուար գիւղի Մինաս քահանայ Սաֆարեանցը յանցանքի համար Նախիջևանում բանտարկուած է, զրկեց նրան քահանայական կարգից:

— Մինօգը հրամայեց Գանձապահ Տ. Նղիշէ վարդապետին Մայր Աթոռի Միաբանների ցուցակի մէջ անցնել նաև Տ. Հմայեակ վրդ. Տ. Սարգսեանին և Տ. Բազրատ արեղայ վարդապետանցին:



## ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

### ԱՍՏՈՒԹԱՅԻՆ ՀՈԳԻՈՑ ԳՈՐԺՈՒՆԵՐՈՒԹԵԱՆ ՆՁԵՆՆԵՐԸ.

«Հոգի Տեանն ի վերայ իմ վասն որոյ ևս օծ իսկ զիս անհատանել տխտացս անախաց զիս խաղիզ զերեւաց զքողորիսն ևս կուտաց ձեւանել, արձակել զվիրաւորս ի քողորիսն, խաղիզ զգարեկան Տեանն ընդունելի»:

Ղուկ. Դ. 18—19:



ՔԻՍՏՈՍ առաջին անգամ իւր մկրտութիւնից հրապարակի վերայ իրրե քարոզիչ յայտնուելուց և հոգեակ ստանալուց յետոյ հայրենի Նազարէթ քա-

ղաքն է եկել, այն տեղը, ուր Նորա մանկութեան խաղաղ օրերն անցան, որտեղից Նա մի քանի տմիս առաջ հեռացել էր իրրե այդ յետ ընկած քաղաքի յետնեալ բնակիչներից մէկը, իրրե մի հասարակ արհեստաւոր: Այժմ Նա ժողովուրդի ուսուցիչն է, բոլորի աչքերը գէպի Նա են դարձած, և վեհ զգացումների որպիսի յուզումով, հրաշարան լեզուի որպիսի շեշտով է արդեօք, որ արտասանուած է Նա այդ խօսքերը. «Հոգի Տեանն ի վերայ իմ...» Արտաքուստ Նորա վերայ մի առանձին փոփոխութիւն չէր եղել, նոյնն էր Նա, ինչ որ Նորուստդէմ զնալուց առաջ՝ նոյն իւրաքանչիւր Նազարէթացու քաջ ծանօթ զիմագծերը, նոյն աղքատիկ հագուստը, նոյն շարժումները, բայց որպիսի մեծ անսահման փոփոխութիւն Նորա հոգեկան աշխարհում: Թորդանանի ափին Նորա վերայ իջած Հոգին էր, որ այժմ խօսում և գործում էր Նորա մէջ, Նորա գէմքին ու շարժուածքին մի նոր խորհրդաւոր արտայայտութիւն տալիս: Սակայն Հոգին ու նորա խորհուրդները ծանաչելու համար հոգեւոր տեսողութիւն պէտք է ունենալ, որ պակասում էր Նազարէթացիներին, նոքա այժմ էլ այն էին տեսնում, ինչ որ առաջ, և տեսածով չափում էին նաև անտեսանելին, որի արտաքին տպաւորութիւնը միայն կրում էին և զարմանում: «Ո՛հ սա է որդին Եղիսէփայ» — ինչպէս ուրեմն, ինչպէս է որ այս շնորհալի բաները խօսում է. Եղիսէփի որդին մեր վարդապետը լինի, մարգարէների խոստացած Աստուծոյ օծեալը հանդիսանայ, լինելու բան չէ, մեր անձնասիրութիւնն այդ չի վերցնի: — Նոյն կերպ են մտածում այսօր մեզանից շատերը. Սոսկական մարդ՝ և Աստուած. մի տգէտ հիւսն՝ և բոլոր դարերի համար կեանքի իմաստութեան նախագծողը. մեր սահմանափակ խելքը դորան հասնել չի կարողանում: Մենք ևս աչքով տեսածն ու մաքով ըմբռնածը չափ ենք դարձնում այն աներեղոյթ Հոգու համար, որ ոչ մի բնական չափի չի ենթարկուում, բայց բարոյական զօրութեամբ ընկճում է մեր հոգին և կենդանի նշաններով խօսում նորա հետ. մինչ յանձին Բրիտանոսի մեր վերայ ներգործող Հոգին ու Նորա զօրութիւնը ծանաչելու համար, պէտք է լաւ

միտ գնենք այդ նշաններին՝ կեանքի մասին մեր ունեցած բոլոր նախապաշարումները մի կողմ՝ թողնելով Որոնք են Հոգու նշանները՝ մտորարեն յայտնել է նախօրօք. աղքատների կրքանիկ կեանքի աւետիս տալ, գերութեան ու կուրութեան կապանքների մէջ բռնուածներին լոյս աշխարհ հանել, վիրաւորներին ազատ արձակել, քարոզել թէ եկել է Տիրոջ հաճելի տարին:

«Աւետարանել աղքատաց...» Բիշ մարդ կայ որ գոնէ մէկ երկու անգամ իր կեանքում զգացած չլինի թէ ինչ է նշանակում աղքատ լինել. իսկ այն մարդիկ որոնք աղքատ ծնունդ աղքատ մեծացել, աղքատ էլ մեռնում են, արդարեւ եթէ Բրիտանոն ոչ մի ուրիշ բարիք բերած չլինէր աշխարհին՝ այդ մեծ բարիքը միայն որով նա աղքատ հոգիների առաջ մխիթարութեան ու խաղաղ երանութեան դռներ բաց արեւ՝ բուսական էր Սորան մարդկայ թեան Փրկիչը դարձնելու: Բրիտանոն աւետարանի փրկարար զօրութիւնը արտայայտուում է այս կէտում՝ նախ նորանով, որ մեր առաջն է դնում մեր հոգեւոր աղքատութիւնը և զգալ տալիս թէ ինչպէս ընդհանուր է այդ աղքատութիւնը բոլոր մարդոց համար թէ ինչպէս աշխարհի ամենամեծ հարուստն անգամ մուրալու պիտ ելնէր, եթէ իւր ներքին աղքատութեան մասին պարզ գիտակցութիւն ունենար. և ապա մխիթարուում ենք հասկանալով, որ ուրիշն նիւթակոն կարիքների ճնշումը իրաւունք չպէտք է տայ արանջալու մեր բազմի դէմ և թշուառ համարելու մեզ, որովհետեւ կեանքի խկական բարիքը՝ կամ ճշմարիտ հարստութիւնը ուրիշ տեղ պէտք է որոնել՝ այնպիսի մի տեղ ուր յետին աղքատն անգամ ամենամեծ գանձ գտնել կարող է, և աւելի հեշտութեամբ քան մեծատունը: Այդ դանձր քաղցածին հաց չէ տալիս և մերկին զգեստ, բայց յազեցնում և ջերմացնում է աղքատի սիրտն այնպէս, որ նա ընդունակ է դառնում համբերութեամբ և անվրդով խաղաղութեամբ ծանր պատահարներ տանելու: մինչ աշխարհի գանձերով յղիացածը ընկճուում է ամենաթեթեւ ձախորդութեան հանդէպ—Որչափ պակաս է մեր ժամանակում հոգւոյ այդ երանական խաղաղու-

թիւնն ու համբերատար զօրութիւնը. ամէնքը հարստութիւն ձեռք բերելու տենդով են բռնուած և աղքատների աւետարանը մոռացուած է ու արհամարհուած... Իսկ աղքատների թիւն օրեցօր աւելանում է և նոցա աւետարանելու կարիքը բազմապատկուում է:

Պակաս չէ նաեւ կոյրերի ու գերիների թիւը: Լուսաւորութեան և ազատութեան դարում ենք ապրում. բայց ոչ այն կոյրերը տեսնում են և ոչ այն գերիները ազատութիւն վայելում: որոնց մասին է Փրկչի խօսքը: Մարդիկ տանեակ տարիներով ուսում են ստանում, համալսարան են գնում և զիտնական անուն վաստակում. բայց չեն կարող ասել՝ որտեղից է բերում իրենց և ո՞ւր է տանում կեանքի հոսանքը: Ազատ քաղաքացիներ են ամէնքը, նոցա պատուին ու գոյքին զիպէլ յետին տնանկին անգամ անիրաւ տեղը բանտ տանել ու շղթաներով կաշկանդել օրէնքը թոյլ չէ տալիս. բայց քանի՞ մարդ կայ արդեօք, որ ազատ լինի սեփական կրքերի բռնութիւնից, քանի՞սը՝ որոնք կամուռոր գնէրիներ զարձած չլինեն այս կամ այն կարողութեան տէր մարդու մօտ—Բրիտանոն ի ծնէ կոյրերին ևս բժշկում էր և զօսացած, գետնին դամուած անգամալոյծին ոտքի կանգնեցնում: Սորա աւետարանը զօրութիւն ունի այսօր ևս տեղով կոյրին այնպիսի սրտատես միտք տալու, որ պայծառ լոյսի մէջ զգայ միշտ իրեն. մութը բանտում նստածին այն հոգեւոր ազատութիւնը շնորհելու, որ ազատ ելմերքի մէջ սաւառնող թռչուններին չնախանձէ. բայց դոցա համար չէ միայն Սորա բերած լոյսն ու ազատութիւնը, այլ բոլոր մարդոց համար անխտիր: Ո՞վ մեզանից իւրաքանչիւր քայլափոխում կարօտ չէ մի մշտավառ կանթեղի, որ ներկայի և ապագայի վերայ լոյս սփռէր, մեր անելիքը ճշտիւ որոշելու միջոց տար. ո՞վ չի զգացել այն ներքին բռնակալի ճնշման ծանրութիւնը, որ ստիպում է մեզ չարը զործել, մինչ մենք գիտենք թէ բարին անելու պարտաւոր ենք: \* Բայց մեր կրթութիւնն այնպէս է տարուում, այնչափ շատ են մոլորեցուցիչ հանգամանքներ մեր

\* Հոտմ. է. 19:

շուրջը, որ մենք սիրում ենք խաւարի մէջ մնալ՝ խաւարի մէջ թաղցնելով մեր չարութիւնները, ու թող չենք տալիս որ աշխարհ եկած լցար լուսաւորէ մեր շաւիղները, տապալում ենք հոգեւոր ստրկութեան լծի տակ, ու չենք կամենում այն կենդանարար քարոզի ձայնը լսել, որ ասում է. «Եթէ Որդին զձեզ ապաւոյնացէ, ճշմարիտ աղաթք լինի՞ջիք» \*.

Նոյն Որդին է, որ իւր Հոգւո զօրութեամբ բռնկում է վերաւորներին և ազատ շնչելու համարձակութիւն տալիս նոցա: Վերջեր կան մարդու սրտի մէջ, որոնց բռնկելու համար աշխարհի բռնկական հմուտութիւնը իւր բազմօրինակ դեղերով ոչ մի սպեղանի չի հնարել Որդեկորոյս մօր դառն մորմոքը, անարդուած պատուի ծանր զգացումը, բռնաբարուած խղճի սուր խայթը— ո՞վ կարող է վերացնել այդպիսի վերքերի պատճառած ցաւը և բռնկութիւն պարզեւել, եթէ ոչ Սա միայն որ զհիւանդութիւնս մեր վերացոյց և զցաւս մեր կրթած: \*\* Ըսնի՛ք անի մեղաւոր կանայք ծուկն են չորքն Սորա առաջ, զզման արտասուէքով Սորա ոտքերը թրջել, և երանական մոխրութեան սրտերում բարձրացել ընկած տեղից, քանի՛ աւազակներ խաչի վերայից պաշտապին հայեացքով Սորա զթուլթեանն են ապաւինել ու արգարոց հանգստեան արժանացել, քանի՛սը յուսահատութեան լուռնայից բաժակը ձեռներին ուշքի են եկել, նոր կեանքի փոթով զգացել և նոր արեւ տեսել, երբ օրհասական թուղթին մտաբերել են այն աստուածային բարբառը, որ հրաւիրում է. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ» \*\*\* Այդ բարբառը մեզ ևս հրաւիրում է, մե՛զ, որոնց վերայ բազմապիսի հոգեւորի այնպիսի ծանր բեռն է դրել քաղաքակիրթ աշխարհը իւր պահանջներով, որոնց կրծքի տակ նորանոր, նախնական մարդուն բոլորովին անծանօթ յոյզեր են շարժում՝ ակտեր ու վերքեր են յառաջ գալիս, բաց աչքով տեսնում ենք, թէ ինչպէս մեծանում են այդ վերքերը, կրծում մեր կեանքը և մահ սպառնում:

Բայց կրկին մտար հայեացքներով կաշկանդուած ներս շնչել չենք կարող այն կենդանարար Հոգին, որ պէտք է վերանորոգէր մեզ ներքուստ, նոր կեանքի արիւն հոսեցնէր մեր կրակներում:

Սոր կեանք, նոր ժամանակ—մեր օրերում շատ են խօսում և զուշակութիւններ անում մի նոր ժամանակի մասին, բայց որչա՞փ տարբեր են այդ զուշակութիւնները այն խօստուէմներից, որ անում էին Բրիտտոսի աշակերանները, երբ ս. Հոգւով լեցուած աշխարհ ելան՝ «քարոզել զտարեկան Տեառն ընդունելի»: Մենք մտածում ենք, ի՞նչ կլինի արդեօք սորանից հարիւր, հազար տարի յետոյ, երբ զիտութիւնն ու արուեստը անսահման կերպով կծաղկեն, երբ բնութեան նորանոր հրաշալիքներ երևան կգան, նոր գիւտեր կլինեն, նոր մեքենաներ կհնարուին՝ երբեք արականութեան ու լուսոյ նորանշան ճառագայթներ միջոց կտան մարդուն մինչև երկրի խորքը զիդելու և երկնքի երեսը կհանեն, բայց խոհական ձայների դորա հեռ մէկտեղ շնչում են մեր ականջին: Ի՞նչ կլինի, եթէ այժմեան քաղաքակիրթ մարդկութեան մէջ տարածուած ակտերն ու մոլութիւնները աճեն ու զօրանան, եթէ աճի ընչաքաղցութիւնն ու անծայր վայելչասիրութիւնը, և մարդիկ յագուրդ զգտնելով իրենց անսանձ կրքերին՝ ամէն սրբութիւն օտնակոխ արած, նուրբ քաղաքականութեամբ միմեանց կործանման համար աշխատեն, մեքենաներ հնարեն, ի՞նչ կլինի մի խօսքով, եթէ այդ նոր ժամանակը «Տիրոջ ընդունելի տարեկանը» չլինի, նիւթական ամէն բարիք բերէ, բայց հոգի չունենայ՝ այն ճշմարտութեան Հոգին, որ միայն կարող է խորհուրդ և իմաստ սրբութիւն և ազնուութիւն տալ մեր կեանքին: Հաճելի դարձնել ժամանակն ու անփնաս՝ բնութեան, արուեստի, զիտութեան բարիքները, Արդեօք աւելի լաւ չէ՞ր, գալիք ժամանակը աղքատ լինէր բոլոր այդ բարիքներով և հարուստ հոգւով:

Սակայն թող նա նիւթական ամէն հարստութիւն ունենայ, միայն թէ մենք հոգւով աղքատ լինինք՝ ծանաչենք մեր հոգեւոր աղքատութիւնը և տենչանք լցուցանել այն միակ ճշմարիտ և առատ աղբիւրից, որ մեր

\* Յովն. Գ. 19. Ը. 36.

\*\* Մատթեոս Ը. 17:

\*\*\* Մատթ. ԺԱ. 29:

Փրկիչն է բացել իւր Հոգին մեզ ժառանգութիւն թողնելով Այսօր ևս Հոգւոյ գործունէութեան ասպարէզը և արտայայտութեան նշանները նոյնն են, ինչ որ երեւան եկան յանձին Տիրոջ Օծեալի. ամէն տեղ ուր աղքատները մխիթարութիւն են գտնում և հոգեպէս անկարօտ զգում իրենց, ուր ծշմարիտ բարոյական կեանք է զարգանում և մարդիկ փախչում են խաւարից, լուսոյ մէջ գործում, ուր թօթափում են մեղքի բռնութեան շղթաները և ազատութիւն գտնում բարին անելու. ուր ներքին վերքեր բուժուում են և վիրաւորը համարձակութիւն է ստանում կրկին ռաքի կանգնելու, հրապարակ ելնելու. ուր խաղաղ, երջանկաւէտ նոր օրերի հով է շնչում՝ այնտեղ Աստուծոյ Հոգի կայ և ամէն ոք, որ Աստուծոյ Օծեալի անունն է կրում, քրիստոնէութեան զրոյմն ունի ճակատին, պարտաւոր է անուցանել իւր մէջ և զօրացնել իւր շուրջը այդ Հոգին:



## ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՏ ԿԵՏԵՐ

Ս. ԳՐԶԻ ՄԷՋ: \*

\*Զի վասն արդարոյ հազիւ որ թէ մեռանիցի, այլ վասն բարւոյ թերեւս համարձակցի որ մեռանելոյ, (Հռոմ. Ե. 7):

Ի նկատի պէտք է ունենալ, որ Պօղոս առաքեալը առ Հռովմայեցիս զրաժ թղթի մեծ մասը նուիրել է այն գաղափարի պարզարանութեան, թէ մենք առ Բրիստոս ունեցած հաւատով ենք արդարութիւն ձեռք բերում. իսկ այս խօսքերով մի կողմնակի օրինակ է բերում, ապացուցանելու համար, թէ որչափ վստահ պէտք է լինենք Աստուծոյ ողորմութեան վերայ, քանի որ Սա այնպիսի մեծ

սեր է արտայայտել դէպի մեզ՝ թոյլ տալով Բրիստոսին մեռնել մեղաւոր մարդոց համար: Օրինակն ուրեմն պէտք է ծառայէր բերուած զոհի մեծութիւնը շեշտելու. բայց մեկնարանները մինչև այժմ այնպիսի որոշ բացատրութիւն չեն կարողացել տալ, որ այդ նպատակին ու խօսքի կապակցութեանը կատարելապէս յարմարուէր: Դարձիւքների զլիաւոր տարբերութիւնը նորա վերայ է, թէ «բարւոյ» բառը յունարէնի մէջ արական պէտք է ընդունել թէ չէ՞զոք. այսինքն՝ մարդո՞ւ թէ իրի համար ասուած: Ներկայումս մեծ մասամբ չէ՞զոք մտքով են առնում և մեկնում այսպէս. Հազիւ թէ արդար մարդու համար մահ յանձն առնէ մէկը. բարի գործի համար գուցէ զրոնուի մէկը, որ համարձակութիւն ունենայ մեռնելու: Այս պէպքում Առաքեալի միտքը պէտք է եղած լինէր պարզել, որ եթէ մենք արդար լինէինք՝ Բրիստոսի մահը նշանակութիւն չէր ունենայ, որովհետեւ արդարն առանց այն ազատ է Աստուծոյ բարկութիւնից, ազատարարի պէտք չունի. բայց մենք արդար չենք, ուստի Բրիստոս իւր մահով մի բարի գործ կատարեց՝ փրկութիւն, յաւիտենական կեանք ձեռք բերաւ մեզ համար: Սակայն այսպիսի թոյլ պատճառարանութիւն դժուար է վերագրել Պօղոս առաքեալի պէս ազդու և կտրուկ լիզուով խօսողի, այդտեղ պակասում է այն հակադրութիւնը, որ խօսքի կապակցութիւնից ինքն ըստ ինքեան պէտք է հետեւէր, և կամայական է երկու զուգահեռաբար զործածուած բառերից մէկը մարդու համար ընդունել, միւսն իրի: Ըստ իս պէտք է այսպէս հասկանալ. սովորական կեանքի մէջ տեսնում ենք, որ արդար մարդու փոխարէն, որչափ և նորա արդարութիւնը ակնյայտի լինի՝ դժուար մէկը իւր զուխը գնէ, լոկ արդարութեան սիրուց. էլի կարող է պատահել, որ բարի մարդու համար, նորանից ընդունած բարիքները աչքի առաջ բերելով և երախտագիտութեան զգացումից դրդուելով՝ կեանքը զոհէ. բայց Բրիստոս, որ մարդկանցից ոչ մի բարութիւն չէր տեսել և արդարութեան մի գիծ անգամ մեր մէջ չէր զրոնում՝ ինչ ուրիշ զրդիչ կարող էր ունենալ իւր մեծ զոհաբերութեան համար, եթէ ոչ

\* Տես «Արատ» հ. Թ. հր. 373:—Այս յօդուածը շատ երկար ու մանրացուցիչ լրամանքով համար՝ քողովում ենք Հայր Գալատացեանի միւս հարցումներ և վերջացնում ենք՝ բացատրելով այս անգամ եւս առաջիկ, քրքրեցի առաւած կեանք: